կողմանց և եկեղեցեաց իշխանք և երիցունք և երկրպագեալ դարձան ի տեղիս իւրեանց։ Եւ երեկոյիս գնացաք յեկեղեցին ընդ նմա, և նա ասացեալ խրատ աւրհնեաց զժողովուրդն տեղոյն և բնակչացն և ելեալ գնաց յետ ժամուն ընդ տանն յոր նստեալ էր վարդապետն՝ ի տուն մեռեալ քեհեային եւ զհացն երեկոյիս կերաք ընդ նմա եւ ասացաք զԵկեսցէի ժամն եւ գնացաք ի ժամն հանդերձ Խաչատուր եւ Կիրակոս եւ Ղազար վարդապետօքն, անդ ննջեցաք։ Եւ ի ժամ ժամու ելեալ գնացաք անդ եւ արարաք զժամն ընդ նմա, և յետ ժամուն ընդ արշալուսն (23 Ապրիլ) բարձեալ զձիս եւ զջորիս նոցա ելեալ գնացաք ուղեւորել դէմ ի չայիրն մեծ, եւ զի անձրեւ էր օրս՝ ի ճանապարհին աւրհնեաց զմեզ եւ ուրոյն ուրոյն մատուցաք համբոյր աջին, եւ պատուիրեաց բան ինչ թէ Զճշմարտախօսութիւնն մի՛ հատուցանէք ի ձեղանէ և զՍուրբ Տանն թիկունք լինելն եւ զնորին զայրէթն քաշել։ Եւ երկրպագեալ մեր ասացաք զԱմէնն։ Եւ դարձեալ ի ծովեզրն գտաք նաւ մի պատրաստական եւ մտաք անդ, ընդ որս էր Հարազատն իմ ընդ իս[1]) եւ Տէր Սիմէոնն եւ կէտուկ Տէր Յովանէսն եւ Շահինն եւ Տէր Վարդանն եւ Մղտեսի Դաւիթն, նաւարկեալ հասաք ի դէմ քաղաքին Բիւզանդոյ՝ ի կողմն հիւսիսոյ[2]), զի հոգմն ընդ մեր էր, որ այժմ ասի Թոփխանէ։ Եւ գնացաք ընդ Հարազատն իմ ի ժամն՝ տեսանել զՄահտեսի Կիրակոսն, զի անդ բերեալ էին վասն բժշկութեան։ Եւ գնացաք այլ յառաջ և նստաք ի տեղի մի յեզր ծովուն հացկերոյթ արարեալ ընդ նոսա որ ընդ մեզն էին։ Եւ գայլն[3]) նաւքն ցորենոյն ընդ ծովէն Ռուզաց՝ ընդ դէմ մեր անցանէին[4]) մտեալ ի ծովն Բիւզանդիոյ եւ Կորնթոսի. եւ եղեւ բազում

1) ընդ իմ. 2) հիւսւսոյ. 3) գայր. 4) անցանէր.